ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 191-Ա
«06» ՀՈՒՆԻՍԻ 2024Թ.

ԽՈՐԵՆ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N129-Ն որոշմամբ հաստատված կարգի 85-րդ կետով, Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Վայոց ձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 8.12 կետով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Վայոց ձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթն անցկացնող մրցութային հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 4-ի թիվ 1 գրությունը, Խորեն Նազարյանի դիմումները՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2024 թվականի հունիսի 7-ից Խորեն Վանյայի Նազարյանին նշանակել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Վայոց ձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

2. 2024 թվականի հունիսի 7-ից Խորեն Նազարյանին ազատել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Վայոց ձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում Խորեն Նազարյանին ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր